



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Երեքշաբթի, 13 Յուլիսի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը «Հայ Դպրոցի Հիմնարկութեան» վարչութեան հինգ ներկայացուցիչներու, որոնք Ազգային Առաջնորդարան եկած էին տեղեկութիւններ տալու իրենց հայրենանուէր աշխատանքներուն մասին: Հանդիպումին ներկայ էին Կրօնական Ժողով ատենապետ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Ազգային Վարչութեան գանձապահ Տիար Թորոս Զէչէճեան: Հանդիպումի վերջին բաժինին միացաւ Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան:

Ներկայացուցիչները՝ վարչութեան ատենապետ Տիար Արմէն Աբրահամեան եւ անդամներ՝ Տիար Վարուժ Կիրեղեան եւ Տիկնայք Սոնէ Տէր Գրիգորեան, իտա Սողոյեան ու Մարալ Անճարկոլեան, ընդհանուր գիծերու մէջ խօսեցան այս հիմնարկութեան կազմաւորման ու նպատակներուն մասին: Կլենտէյլի մէջ 2003ին հիմնուած այս միաւորը իրեն համար առաքելութիւն ճշդած է օգտակար հանդիսանալ Հայաստանի ու Արցախի դպրոցներուն, իբրեւ առաջին ծրագիր՝ անոնց տրամադրելով նստարաններ ու աթոռներ: Հինգ տարուան ժամանակամիջոցին, Հիմնարկութիւնը շուրջ 9,000 միաւոր աթոռ ու նստարան տրամադրած է բոլոր շրջաններուն մէջ գործող շուրջ 200 դպրոցներու. այս կահոյքը կը գործածեն 18,000 աշակերտներ: Այսուամենայնիւ, նկատի ունենալով որ հայրենի դպրոցներու աշակերտութեան թիւը կ'անցնի 450,000ը, ցարդ տրամադրուած նպաստը ընդհանուր պահանջին մէկ փոքր բաժինն է միայն: Արդարեւ, գործող 1,300 դպրոցներէն 900ը կը կարօտին օժանդակութեան: Հետեւաբար, ներկայացուցիչները եկած էին Առաջնորդ Սրբազանին հետ խորհրդակցելու այս աշխատանքին յաւելեալ նպաստ ապահովելու միջոցներուն մասին, վեր առնելով հայկական վարժարաններու աշակերտութեան մասնակցութիւնը՝ որեւէ ձեւի հանգանակութեան ճամբով: Իրենց տարած աշխատանքին մասին լուսանկարներու ցուցադրութեան ճամբով, անոնք բացատրեցին, թէ հայրենիքին տրամադրուած աջակցութիւնը հիմնականին մէջ կ'ապահովուի նուիրատուութիւններու ճամբով, հոմ շինանիւթերը կ'առաքուին Հայաստան, ուր ատաղձի գործատուներու հետ գործակցաբար՝ կը պատրաստուին աթոռներն ու

սեղանները, այսպեսով աշխատանքի որոշ առիթ ստեղծելով նաև աշխատաւորներու: Ծրագիրին այս առաջին բաժինը ամբողջացնելէ ետք, ու նիւթական միջոցներու ապահովման պարագային, Հիմնարկը կը ծրագրէ հոգալ դպրոցներու այլ տեսակի կարիքները եւս, ինչպէս՝ մարզական պիտոյքներ եւայլն:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց Յ. Դ. Հիմնարկութեան հայրենասուեր ու դպրոցաշէն առաքելութիւնը ու բարձր գնահատեց անոր անդամներուն ու ծառայողներուն նուիրաբերումը, մանաւանդ որ այս աշխատանքը լիովին կ'իրականանայ կամաւոր ծառայութեամբ: Խորհրդակցութիւն տեղի ունեցաւ նուիրահաւաքի կարելիութիւններուն ու ձեւերուն մասին: Այնուհետեւ, նկատի ունենալով որ հիւր ներկայացուցիչները առաջին անգամ ըլլալով կ'այցելէին Ազգ. Առաջնորդարան, Առաջնորդ Սրբազանը անոնց ծանօթացուց բաժանմունքները: Ան նաև խորհրդանշական յուշանուէրներ յանձնեց վարչութեան ներկայացուցիչներուն, յաջողութիւն ու աննահանջ երթ մաղթելով անոնց աշխատանքներուն:

PRELATE WELCOMES ARMENIA SCHOOL FOUNDATION MEMBERS

On Tuesday, July 13th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed members of the Armenia School Foundation, who had come to the Prelacy to introduce the mission of the foundation. Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian and Executive Council Treasurer Mr. Toros Kejejian participated in the meeting, and Executive Council Chair Mrs. Rima Boghossian joined later on.

The group was led by foundation Chair Mr. Armen Abrahamian, and included members Ms. Moneh Der Grigorian, Ms. Ida Moghoyan, Ms. Maral Anjargolian, and Mr. Varooj Kureghian. They reported that the Armenia School Foundation was founded in May of 2003 in Glendale, California, with the purpose of ensuring that all children in Armenia have a safe and supportive learning environment by providing new furniture to enhance the learning process. Since its founding, the organization has provided 9,000 pieces of furniture to nearly 200 schools, and 18,000 students have benefited from their service. Given that the total number of students in Armenia reaches 450,000, the guest reported that there are still many schools and students that need the assistance of the foundation. Given this great need, the members had come to discuss with the Prelate means of securing additional support, possibly through a fundraiser with the participation of Prelacy Schools' students. Through a slideshow presentation, the Prelate and Councils' members witnessed the work carried out by the foundation, which secures donations from community members and businesses to purchase raw material for the desks and chairs, which it then transports to Armenia where the furniture are built locally, thus at the same time creating jobs for Armenian workers.

The Prelate commended the initiative and service of the members, and given that it was their visit, familiarized them with the endeavors and mission of

the Prelacy. After some more discussion on fundraising possibilities, the meeting concluded with the Prelate presenting the guests with mementos and wishing them success in their service.